# Տեղական/տարածաշրջանային տնտեսական զարգացման ցանցը՝ որպես ընդլայնված մրցունակության որոշիչ լծակ Սևծովյան ավազանի տարածաշրջանում

## Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| *Ոլորտ՝* | Տնտեսություն |
| *Տևողություն՝* | 24 ամիս |
| *Իրականացման ժամանակահատված՝* | հուլիս 2013 – հունիս 2015 |
| *Ընդհանուր բյուջե՝* | 470,540 եվրո |
| **ՀՀ շահառու հաստատություններ՝** | Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոն, Գեղարքունիքի առևտրաարդյունաբերական պալատ |
| **Մասնակից երկրներ՝** | Հունաստան, Հայաստան, Վրաստան, Մոլդովա, Բուլղարիա |

## Ծրագրի նկարագրություն

***Ընդհանուր նպատակը՝*** Բարձրացնել տեղական և տարածաշրջանային տնտեսական զարգացման հիմնական մասնակիցների ձեռնարկատիրական և վարչարարական կարողությունները՝ բարելավելու համար սոցիալական, տեղեկատվական և այլ կապերը տեղական մակարդակում և գործընկեր երկրների միջև՝ այդպիսով խրախուսելով ազգային կառավարություններին մեծացնել համագործակցության հնարավորությունները և համադրել Սևծովյան ավազանում ավելի լավ կյանքին ուղղված ջանքերը:

***Ձեռք բերված արդյունքները՝***

- Ծրագիրն իրականացնող կազմակերպությունների կողմից ուսումնասիրվել են մասնակից երկրների տեղական տնտեսական զարգացման (ՏՏԶ) նախաձեռնությունները, առկա ծրագրերն ու գործիքները, ապահովվել է փորձի և գիտելիքների փոխանակում ՏՏԶ ծրագրերի վերաբերյալ,
- Բացահայտվել են ծրագրի մասնակից համայնքների /տարածաշրջանների մրցակցային առավելությունները և մշակվել են արժեքային շղթաներ մասնակից երկրների միջև,

- Մշակվել և հրատարակվել է «Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատում (PACA)» ընդհանրացված գրքույկը, որտեղ ներկայացված են Ծրագրի մասնակից հինգ երկրների ընտրված համայնքների տնտեսական նկարագրերը, մրցակցային առավելությունները և համագործակցության հնարավորությունները,
- Մասնակից երկրների միջև ստեղծվել է տեղական/տարածաշրջանային տնտեսական զարգացման ցանց, որը ծրագրի ավարտից հետո էլ աջակցություն կցուցաբերի գործարար կապերի և համագործակցության հաստատման գործում:

## Հավելյալ տեղեկատվություն

Տեղական/տարածաշրջանային տնտեսական զարգացման ցանցը՝ որպես ընդլայնված մրցունակության որոշիչ լծակ սևծովյան ավազանի տարածաշրջանում (http://blacksea-cbc.net/wp-content/uploads/2015/12/fact-sheet-MIS-2620.pdf)